

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ Կոտայքի մարզի <<Նոր Հաճնի N1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի դասվարի և մաթեմատիկա /10 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար մրցույթ:

Ուսուցիչների պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ տարիֆիկացիայի:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /Ձև 1/
2. Փաստաթուղթ/դիպլոմ՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ
3. Անձնագրի պատճենը
4. Ինքնակենսագրություն/Ձև4/
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի , հավաստագրերի /պատճենները/ դրանց առկայության դեպքում
6. Մեկ լուսանկար՝ 3X4 չափի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ
9. Որակավորման տարակարգ

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև **սեպտեմբերի 8-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և տոնական օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2020 թվականի սեպտեմբերի 11-ին, ժամը 14:00, Կոտայքի մարզի << Նոր Հաճնի N1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ք. Նոր Հաճն , Չարենցի 20: Տեղեկությունների համար զանգահարել՝ /0224/ 4-27-58 հեռախոսահամարով: